



**«Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական
հասարակության մեջ» ծրագիր**

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ2

ՀԻՄՆԱԽՆԴԻՒ ՄԱՀՄԱՆՈՒՄ.....3

Մարզային հանդիպումներ կանանց հետ. հիմնախնդիրների
առաջնահերթությունների որոշում.....3

Վիճակագրական տվյալների վերլուծություն.....5

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Երիտասարդ մայրերի համար
ծառայությունների պակաս.....9

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Երիտասարդ մայրերի համար սոցիալական
աշխատանքի ծառայությունների ցանցի ձևավորման ուղղությամբ.....11

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Առցանց հարթակների հասանելիություն
կանանց խոցելի խմբերի համար.....15

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Կանանց խոցելի խմբերի համար հանրային
ծառայությունների առցանց թվային հարթակների հասանելիության բարձրացման
ուղղությամբ.....19

ԵՐԵՎԱՆ 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 ծրագրում կարևորվել է գենդերային հավասարությանը հասնելուն ուղղված պետական նպատակային ծրագրերի և միջոցառումների մշակումն ու իրականացումը՝ միտված հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կանանց և տղամարդկանց հնարավորությունների միջև անհավասարության վերացմանը¹:

Երեխան և մայրությունը հայկական հասարակության մեջ բարձր արժեքներ են: Հասարակության բարեկեցությունը մեծապես պայմանավորված է մայրերի և երեխաների առողջությամբ և բարօրությամբ²: Մայրությունը ուրախություն և բավարարում է բերում, բայց կարող է նաև կապված լինել սթրեսի հետ, որը հանգեցնում է բազմաթիվ հիմնախնդիրների, եթե երիտասարդ մայրը չի ստանում համապատասխան աջակցություն ընտանիքից, համայնքից և պետությունից: Երիտասարդ մայրերն անխուսափելիորեն բխվում են հոգեբանական, սոցիալական, տնտեսական և առողջական մարտահրավերների հետ, որոնք կարող են հասարակության մեջ կնոջ խոցելիության, և, հետևաբար, կանանց և տղամարդկանց անհավասար դիրքի պատճառ դառնալ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 ծրագրում մոր ու մանկան առողջության պահպանումը և վերարտադրողական առողջության բարելավումն ամրագրված են որպես գերակա ոլորտ: Մասնավորապես ծրագրում ասված է՝ «Հատուկ ուշադրության կենտրոնում են լինելու մոր և մանկան առողջության պահպանման, անվտանգ մայրության, վաղ մանկության շրջանի և դեռահասության առողջապահական խնդիրները»³:

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026թթ.), ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշման հավելված (Տե՛ս <https://www.gov.am/files/docs/4586.pdf>):

² Մոր և մանկան առողջության ցուցանիշների միտումները, հիմնախնդիրները, առաջիկա ռազմավարական ուղղությունները, Երևան, 2020 (<https://nih.am/assets/pdf/atvk/db7aad88a52714a90f6b69ecca6df204.pdf>):

³ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026թթ.), ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշման հավելված (Տե՛ս <https://www.gov.am/files/docs/4586.pdf>):

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

Մարզային հանդիպումներ կանանց հետ. հիմնախնդիրների առաջնահերթությունների որոշում

2023 թվականի հունիս-օգոստոս ամիսներին իրականացվել են կանանց աշխատանքային խմբերի հետ հանդիպումներ, մարզային քննարկումներ, ինչպես նաև փորձագետների հետ քննարկումներ: Կանանց աշխատանքային խմբի հետ առաջին հանդիպման ժամանակ, որը կայացել էր հունիսի 16-ին, իրականացվեց «ուղեղների գրոհ» և վեր հանվեցին հետևյալ գենդերային հիմնախնդիրները՝

1. Կանանց անհավասարությունը թվային տեխնոլոգիաների դարաշրջանում,
2. Քաղաքականության մեջ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց ցածր ներառվածությունը,
3. Կրթության դերը գենդերային կարծրատիպերի վերարտադրման գործում,
4. Կանանց տնտեսական հզորացման հնարավորությունների պակասը,
5. Հաշմանդամություն ունեցող կանանց մարտահրավերները կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտներում,
6. Հետպատերազմական հասարակության մեջ կանանց դերը,
7. Կանանց մասնակցությունը համայնքային բյուջեի ձևավորման գործընթացին,
8. Երիտասարդների ներգրավվածությունը և գենդերային հավասարությունը:

Հուլիսի 20-ին կանանց աշխատանքային խմբի երկրորդ հանդիպման ժամանակ, որի խորագիրն էր «Սոցիալական քաղաքականությունը Հայաստանում. Դրական ազդեցությունները և բացերը (գենդերային հավասարության տեսանկյունից), ազդեցությունը երիտասարդ ընտանիքների և երիտասարդ մայրերին/ կանանց վրա», քննարկվեցին և հստակեցվեցին նախորդ հանդիպման ժամանակ նույնականացված գենդերային հիմնախնդիրները: Արդյունքում ձևակերպվեցին հետևյալները՝

1. Միայնակ մոր կարգավիճակը՝ որպես նպաստ ստանալու հնարք,
2. Նպաստի համար առցանց դիմելու դժվարությունները,
3. Մայրության, երեխայի ծննդյան, երրորդ և հաջորդ երեխայի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստների ազդեցությունը,
4. Նախակրթական հաստատությունների հասանելիությունը,
5. Դայակի ծրագրերի բացակայությունը:

Գյումրիում հուլիսի 30-ին կայացած մարզային քննարկման ժամանակ իրականացվեց վերոնշյալ հիմնախնդիրների վալիդացիա և հետևյալ հիմնախնդիրները համարվեցին առաջնահերթություն՝

1. Աջակցություն բազմազավակ ընտանիքներին,
2. Պետական առցանց հարթակների հասանելիություն:

Օգոստոսի 25-ին կայացած փորձագետների հանդիպման ժամանակ մշակվեցին վերոնշյալ երկու ուղղություններով առաջարկներ և հստակեցվեցին երկու առաջնահերթ նպատակներ՝

1. Երիտասարդ մայրերի համար սոցիալական ծառայությունների փաթեթի մշակում,
2. Պետական առցանց հարթակների հասանելիության ապահովում (*Տե՛ս Աղյուսակ 1.*):

Աղյուսակ 1. ՀՀ-ում գենդերային հիմնախնդիրների վերհանման և առաջնահերթությունների սահմանման նպատակով ՕքսիՋեն հիմնադրամի կողմից իրականացված միջոցառումները:

Ամսաթիվ	Մասնակիցներ	Չնաչափ	Նպատակ	Արդյունք
16.06.2023	Կանանց աշխատանքային խումբ	Առցանց	Ուղեղների գրոհ	Վերհանած հիմնախնդիրներ
20.07.2023	Կանանց աշխատանքային խումբ	Առցանց	Հիմնախնդիրների քննարկում	Հիմնախնդիրների առաջնահերթությունների որոշում
31.07.2023	Մարզային հանդիպում՝ Գյումրու ՀԿ-ների և համայնքի ներկայացուցիչների հետ	Անցանց	Հիմնախնդիրների վալիդացիա	1. Աջակցություն բազմազավակ ընտանիքներին 2. Պետական առցանց հարթակների հասանելիություն
25.08.2023	Փորձագետներ	Առցանց	Առաջարկությունների մշակում	1. Երիտասարդ մայրերի համար սոցիալական ծառայությունների փաթեթի մշակում 2. Պետական առցանց հարթակների հասանելիության ապահովում

Վիճակագրական տվյալների վերլուծություն

ՀՀ կառավարության կողմից իրականացված ծնելիության աճի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ մայրության նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, ամսական 50,000 դրամ՝ երրորդ և հաջորդ երեխաների ծննդյան դեպքում, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ, գյուղաբնակ ծնողին խնամքի նպաստ⁴, էական ազդեցություն են ունեցել ՀՀ-ում ժողովրդագրական իրավիճակի բարելավման տեսանկյունից: Մասնավորապես՝

1. 2019-2021 թվականների ընթացքում ՀՀ-ում մշտական բնակչության ընդհանուր թվաքանակի կրճատման պայմաններում՝ 2 959 700-ից մինչև 2 961 400, գյուղական բնակչության թվաքանակն ավելացել է՝ 1 067 600-ից դառնալով 1 069 200⁵:
2. 2019-2021 թվականների ընթացքում նկատվում է ծնվածների թվի ավելացում: Եթե 2019-ին ծնվածների քանակը կազմում էր 12 200 երեխա, ապա 2021՝ 12 400: Ընդ որում՝ գյուղական բնակավայրերում այդ ցուցանիշի կազմում էր 12 900⁶:
3. 2020-2022 թվականների ընթացքում մինչև մեկ տարեկան երեխաների քանակն ավելացել է՝ 35 900-ից դառնալով 36 400: Ընդ որում՝ գյուղական բնակավայրերում 12 300-ից դառնալով 13 700⁷:
4. 2019-2021 թվականների ընթացքում երրորդ և հաջորդ կարգի ծնվածների ընդհանուր քանակը և ընդհանուր ծնվածների մեջ չափաբաժինը նույնպես աճել է (*Տե՛ս Աղյուսակ 2.*):

Աղյուսակ 2. Երրորդ և հաջորդ կարգի կենդանի ծնվածների թվաքանակը և չափաբաժինն ընդհանուր ծնվածների քանակից⁸:

	2019	2020	2021
Երրորդ և բարձր կարգի ծնվածներ	9001	10131	11438
% ընդհանուր ծնվածների քանակից	25%	27.9%	31.2%

5. 2017-2021 թվականների ընթացքում բարձրացել է մայրանալու միջին տարիքը՝ 24.8-ից հասնելով 25.7-ի⁹:

⁴ Երեխայի ծննդյան կապակցությամբ պետության կողմից տրվող նպաստներն ու դրանց չափը, 13 հունվարի, 2022 (Տե՛ս <https://www.mlsa.am/?p=32385>):

⁵ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022 (Տե՛ս <https://armstat.am/file/doc/99535998.pdf>):

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ Տե՛ս նույն տեղը:


⁹ Տե՛ս նույն տեղը:

6. 2017-2021 թվականների ընթացքում ծնելիությունը կրճատվել է մինչև 24 տարիքային խմբում, իսկ 25 և ավել տարիքային խմբերում՝ աճել է (Տե՛ս Աղյուսակ 3. և Գծապատկեր 1.):

Աղյուսակ 3. Ծնելիության տարիքային գործակիցներն ըստ մոր տարիքի (կենդանի ծնվածները նշված տարիքի 1000 կնոջ հաշվով)¹⁰:

Կնոջ տարիքը	2017	2018	2019	2020	2021
20-ից ցածր տարեկան	21.1	19.0	16.8	13.9	12.8
20-24 տարեկան	110.5	109.2	110.6	110.9	107.2
25-29 տարեկան	97.1	98.2	100.6	106.0	111.9
30-34 տարեկան	56.1	57.0	59.1	63.6	69.5
35-39 տարեկան	25.1	25.5	26.2	30.1	33.0
40-44 տարեկան	4.7	5.1	5.9	6.2	7.1
45-49 տարեկան	0.5	0.5	0.5	0.4	0.4
15-49 տարեկան	49.5	48.5	48.2	48.8	49.2

Գծապատկեր 1. Ծնելիության տարիքային գործակիցներն ըստ մոր տարիքի (կենդանի ծնվածները նշված տարիքի 1000 կնոջ հաշվով)¹¹:



Մինևույն ժամանակ ըստ 2018թ. պաշտոնական տվյալների, մինչև 5 տարեկան երեխաների մահվան ընդհանուր դեպքերի մեջ մանկական (0-1տ.) մահացության տեսակարար կշիռը կազմել է 85.9%, իսկ նորածնային (0-28օր) մահացության մասնաբաժինը՝ 65%: 0-5 տարիքային խմբի երեխաների մահացության պատճառների շարքում մեծ դեր ունեն դժբախտ պատահարները և վնասվածքները: Եթե 0-1 խմբում

¹⁰ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022 (Տե՛ս <https://armstat.am/file/doc/99535998.pdf>):

¹¹ Տե՛ս նույն տեղը:

դրանցով պայմանավորված մահացության մասնաբաժինը կազմում է ընդամենը 0.4%, իսկ 0-5 տարեկանների խմբում՝ 5.7%, ապա 1-5 տարիքային խմբում՝ 31% (այս տարիքում մահացածների ընդհանուր թվի գրեթե 1/3): Ըստ էության 1-5 տարեկան հասակում մահացած գրեթե յուրաքանչյուր 3-րդ երեխայի մահվան պատճառը դժբախտ պատահարն է (տրավմատիզմ, ՃՏՊ, թունավորում, այրվածք և այլն), որոնք բոլորն էլ երեխայի անվտանգությանն ուղղված համապատասխան ծրագրային միջոցառումների իրականացման պայմաններում կանխելի են¹²:

Երեխաների դժբախտ պատահարներով պայմանավորված մահացության ցուցանիշները տարիքային խմբերի աճին զուգահեռ բարձրանում են: Այսպես, եթե 0-5 տարիքային խմբում այն կազմում է մահվան բոլոր պատճառների 5.7%, իսկ 5-14 տարեկանների խմբում՝ բոլոր մահերի 8.8%, ապա 14-19 տարեկանների մահացության կառուցվածքում դրանք զբաղեցնում են առաջին հորիզոնականը՝ կազմելով 42%: Բոլոր տարիքային խմբերում տղաների շրջանում մահացությունը գրեթե 5 անգամ ավելի բարձր է քան աղջիկների մոտ և շատ ավելի բարձր՝ մարզերում: Երեխաների ավագ տարիքային խմբում դժբախտ պատահարների դեպքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում ճանապարհատրանսպորտային պատահարներին: Վերջիններս առաջին տեղում են նաև մինչև 19 տարեկանների մահվան պատճառներում: Այս ցուցանիշը (հաշվարկվում է տվյալ տարիքային խմբի 100 000 բնակչի նկատմամբ) 2016-2017թթ. կտրվածքով աճել է գրեթե կրկնակի (2016թ.՝ 4.6/100000, 2017թ.՝ 8.9/100000): Այս խմբի երեխաների մահվան պատճառներում զգալի տեղ են զբաղեցնում հոգեկան առողջության խնդիրներով պայմանավորված կանխամտածված ինքնավնասումները (2017թ.՝ 1,8/100000)¹³:

¹² Մոր և մանկան առողջության ցուցանիշների միտումները, հիմնախնդիրները, առաջիկա ռազմավարական ուղղությունները, Երևան, 2020 (<https://nih.am/assets/pdf/atvk/db7aad88a52714a90f6b69ecca6df204.pdf>):

¹³ Տե՛ս նույն տեղը:

Եթե 1-5 տարիքային խմբի համար միջավայրի անվտանգությունը կարևորվում է տանը, բակում և մանկապարտեզում, ապա դպրոցահասակ երեխաների համար՝ փողոցում և դպրոցում¹⁴:

Բացի այդ 2023 թվականին ՕքսիՋեն հիմնադրամի կողմից կազմակերպած մարզային քննարկումների ժամանակ հնչել են այս հիմնախնդրի հետ կապված հետևյալ մտքերն ու օրինակները:

«Ես գիտեմ ընտանիքներ, որոնք չունեն ապրելու տարրական պայմաններ, բայց բերում են 6-րդ երեխային» (Կանանց հետ մարզային քննարկումներից):

«Վերջերս մի կին ահագանգեց, ում ամուսինը բանտում էր, դուրս էր եկել բանտից և ասել էր՝ դու պիտի ունենաս 7-րդ երեխան, որպեսզի ես մեքենա առնեմ» (Կանանց հետ մարզային քննարկումներից):

Վիճակագրական տվյալների վերլուծությունը և կանանց աշխատանքային խմբերի հետ հանդիպումները փաստում են, որ ծնելիության աճին ուղղված պետական միջոցառումները բավական արդյունավետ են հատկապես գյուղական բնակավայրերում: Մի կողմից՝ աճում է ծնելիությունը, մյուս կողմից՝ աճում է երրորդ և բարձր կարգի երեխաներ ունենալու միտումը: Միևնույն ժամանակ մանկական մահացության վերաբերյալ տվյալները փաստում են, որ տարեր տարիքային խմբերի երեխաների մահվան պատճառների շարքում գերակշռում են դժբախտ պատահարները և հոգեկան առողջության խնդիրներով պայմանավորված կանխամտածված ինքնավնասումները: Վերջիններիս մի մասն ուղղակի կամ անուղղակիորեն պայմանավորված է ծնողավարման հմտությունների պակասով:

¹⁴ Մոր և մանկան առողջության ցուցանիշների միտումները, հիմնախնդիրները, առաջիկա ռազմավարական ուղղությունները, Երևան, 2020 (<https://nih.am/assets/pdf/atvk/db7aad88a52714a90f6b69ecca6df204.pdf>):

**ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Երիտասարդ մայրերի համար
ծառայությունների պակաս**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակել և ներդրել է ծնելիության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

1. մայրության նպաստ,
2. երեխայի ծննդյան միանվագ նպաստ,
3. ամսական 50,000 դրամ՝ երրորդ և հաջորդ երեխաների ծննդյան դեպքում,
4. մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ,
5. գյուղաբնակ ծնողին խնամքի նպաստ:

Այդ միջոցառումները նպաստել են Հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը: Ծնելիությունն աճում է հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքներում, ինչն առանց աջակցող սոցիալական ծառայությունների համակարգի, կարող է ունենալ և արդեն իսկ ունենում է կողմնակի բացասական ազդեցություն և սոցիալական ռիսկեր է պարունակում: Այդ ռիսկերի շարքում կարելի է առանձնացնել՝

1. Կնոջ մարմնի չարաշահում՝ երեխա ունենալու և պետությունից նպաստ ստանալու նպատակով,
2. Երիտասարդ մայրերի սոցիալական խոցելիության բարձրացում,
3. Ընտանեկան հարաբերությունների վատթարացում,
4. Կնոջ նկատմամբ հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնություն,
5. Երեխաների նկատմամբ հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնություն և անտեսում,
6. Կանանց կյանքի և առողջության համար ռիսկեր,
7. Երեխաների կյանքի և առողջության համար ռիսկեր,
8. Երեխաների սոցիալական խոցելիության խորացում,
9. Մանկալքություն,
10. Երեխաների սոցիալականացման ընթացքում բացթողումներ:

Կանանց և երիտասարդ մայրերի խոցելիության բարձրացմանը նպաստել է նաև 2020 թվականին տեղի ունեցած 44-օրյա Արցախյան պատերազմը, որի արդյունքում շատ կանայք այրիացան, որդիներ կորցրեցին, պատերազմից վերադարձած շատ սղամարդիկ ձեռք բերեցին հաշմանդամություն և գրեթե բոլորը՝ հոգեբանական խնդիրներ:

Ինչպես կանանց աշխատանքային խմբի անդամները, այնպես էլ ոլորտի փորձագետները նշում են, որ վերոնշյալ ռիսկերը կանխելու ուղղությամբ աշխատանք չի վարվում յուրաքանչյուր ընտանիքի հետ, և հասարակության մեջ ընտանիքի մոդելը խեղաթյուրվում է: Կան ընտանիքներ, որոնք երեխա են ունենում, որ միանվագ նպաստ ստանան՝ 1 մլն, 1,5 մլն, բայց չունեն տնտեսավարման և ծնողավարման բավարար հմտություններ, և գումարը չի ծառայում իր նպատակին՝ երեխայի առողջ զարգացմանն ու սոցիալականացմանը, իսկ ընտանիքը շարունակում է մնալ նույն սոցիալապես խոցելի վիճակում: Շատ դեպքեր, օրինակներ կան, երբ երեխաները ծնվում են պարտքերը փակելու, խոշոր գնումներ անելու՝ կենցաղային տեխնիկա, ավտոմեքենա և այլն, կամ ընտանիքի այլ տնտեսական խնդիրները լուծելու համար: Նման ընտանիքներում կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված շատ խնդիրներ են առաջանում:

Ստեղծված իրավիճակը վկայում է, որ միայն դրամական աջակցությունը՝ առանց սոցիալական ծառայությունների, որպես ծնելիության խթանման միջոց, ոչ միայն կարճատև էֆեկտ ունի, այլև հղի է նոր հիմնախնդիրների առաջացմամբ: Դրամական աջակցությունը նպաստում է ծնելիության աճին հատկապես սոցիալապես անապահով ընտանիքներում, իսկ ծնված երեխայի կյանքի որակի տեսակետից անհրաժեշտ է ընտանիքին և երիտասարդ մայրերին աջակցող սոցիալական ծառայությունների ցանցի ստեղծում:

Մինևույն ժամանակ Հայաստանում սոցիալական ոլորտում գործում են բավական թվով պետական և հասարակական կազմակերպություններ, որոնց միջև գործառույթների արդյունավետ բաշխման և համագործակցության ձևաչափերի

կատարելագործման անհրաժեշտություն կա: Առկա կառույցները հաճախ չունեն բավարար ռեսուրսներ արդյունավետ գործելու համար: Կանխարգելմանն ուղղված միջոցառումներն համեմատաբար քիչ են, կառույցներն ակտիվանում են, երբ դեպքը բարդանում է և միջամտության կարիք կա:

Անհրաժեշտ են սոցիալական աջակցության տարբեր ձևեր և մոտեցումներ, ժամանակին միջամտության հնարավորություններ, որոնք թույլ կտան, որ ապահովվի ոչ միայն երեխաների ծնունդների թվաքանակի աճ, այլև ծնված յուրաքանչյուր երեխայի սոցիալական պաշտպանությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Երիտասարդ մայրերի համար սոցիալական աշխատանքի ծառայությունների ցանցի ձևավորման ուղղությամբ

ԱՍՀՆ ուղղված առաջարկություններ

1. Անհրաժեշտ է մշակել յուրաքանչյուր երեխայի ծննդի պարագայում ընտանիքին դրամական աջակցությանը զուգահեռ տրամադրվող սոցիալական աշխատանքի ծառայությունների փաթեթ: Քաղաքականությունը պետք է ուղղված լինի երեխայի և երիտասարդ մոր իրավունքների պաշտպանությանը, որպեսզի յուրաքանչյուր ընտանիքի համար հասանելի լինի աջակցային ծառայությունների ցանցը:
2. Ընտանիքին տրամադրվող սոցիալական աշխատանքի ծառայությունները պետք է դառնան համագործակցային ցանցի մաս, որի մեջ մտնում են նախակրթարանները, դպրոցները, առողջության առաջնային պահպանման կենտրոնները և այլն: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել այդ կառույցների միջև արդյունավետ համագործակցության ձևաչափ և ընթացակարգեր, որը կարող է համակարգվել ԱՍՀՆ կամ մարզպետարանների կողմից: *(ԿԳՄՄՆ և Առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ)*
3. Անհրաժեշտ է պարբերաբար գնահատել և բարելավել այդ կառույցների սոցիալական աշխատանքի ծառայություններ իրականացնելու

կարողությունները և ապահովել դրանք անհրաժեշտ ռեսուրսներով՝ նյութական, տեխնիկական, մարդկային և արտակարգ իրավիճակներում գործելու լիազորություններով:

4. Ճնշման տակ կամ ռիսկային հարաբերություններում գտնվող կանանց համար ապահովել նրանց համար հասանելի միջոցներով՝ գործող հեռախոսային թեժ գծեր, սոցիալական ցանցերում խմբեր, խնդրահարույց իրավիճակի մասին ահազանգման հնարավորություն, որպեսզի անհրաժեշտ չլինի ֆիզիկապես ներկայանալ որևէ կառույց, ինչը կարող է կապված լինել լրացուցիչ դժվարությունների հետ: Գործող թեժ գծերով, սոցիալական ցանցերով կամ այլ խողովակներով ստացված ահազանգերին համարժեք արձագանքելու համար մասնագետները պետք է ունենան բավարար տեղեկություններ և հմտություններ:
5. Ֆինանսական գրագիտության, բյուջեի կառավարման և կենցաղավարման դասընթացները պետք է պարտադիր լինեն այն ծնողների համար, որոնք սոցիալական աշխատողների կողմից գնահատվել են որպես նման հմտությունների զարգացման կարիքն ունեցող:
6. Վերոնշյալ սոցիալական աշխատանքի ծառայությունների ստացումը և դասընթացներին մասնակցությունը պետք է հանդիսանա ՄՄԾ ՏԿ կողմից պետական դրամական աջակցության և նպաստների վճարման նախապայման: Այս դրույթը կարող է ամրագրվել Ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգում, որը նախատեսված է գործարկել 2024 թվականի մարտից:
7. Վերոնշյալ ծառայություններն ու դասընթացները պետք է մատուցվեն համայնքում՝ ՄՄԾ ՏԿ-ում, մանկապարտեզում, դպրոցում կամ առողջության առաջնային պահպանման կենտրոնում (և/կամ առցանց) համապատասխան մասնագետների կողմից, որպեսզի հասանելի լինեն բոլոր ծնողների համար:

8. Աշխատող մայրերի համար մտուր-մանկապարտեզների ցանցի ստեղծում, որտեղ հնարավոր կլինի 1-3 տարեկան երեխաներին թողնել աշխատանքային օրվա ընթացքում:
9. Վաղ հայտնաբերման, կանխարգելման և վաղ միջամտության գործառույթը կատարելու հմտություններ և լիազորություններ պետք է ունենան ընտանիքին և երեխային մոտ կանգնած բոլոր կառույցները՝ ՄՄԾ ՏԿ, համայնք, մանկապարտեզ, դպրոց, առողջության առաջնային պահպանման կենտրոն:
(ԿԳՄՄՆ և ՏԿԵՆ հետ համագործակցությամբ)
10. Համեմատաբար բարդ դեպքերում խոցելի ընտանիքներին թիրախային մասնագիտացված սոցիալական աշխատանքի ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ է բնակավայրերում համայնքային սոցիալական աշխատողների թվի համալրում, իսկ մեծ բնակավայրերում համապատասխան սոցիալական աշխատանքի կառույցների հիմնում: Այս պահի դրությամբ սահմանված է մեկ սոցիալական աշխատողի հաստիք 5000 բնակչի հաշվով, որը խիստ չափազանցված է և բացասաբար է ազդում սոցիալական աշխատողի ծառայություններ որակի վրա: Առաջարկվում է սահմանել մեկ սոցիալական աշխատողի հաստիք 2000 բնակչի հաշվով հարաբերակցությունը: *(ՏԿԵՆ հետ համագործակցությամբ)*
11. Համայնքապետարանները, առողջության պահպանման առաջնային օղակները, ՄՄԾ ՏԿ-ները, մանկապարտեզներն ու դպրոցները պետք է իրազեկեն կանանց համայնքում գործող ծառայությունների ցանցի մասին: *(Առողջապահության նախարարության, ԿԳՄՄՆ և ՏԿԵՆ հետ համագործակցությամբ)*
12. Իրավագորել կանանց նրանց իրավունքների մասին:
Առողջապահության նախարարությանն ուղղված առաջարկություններ
13. Երիտասարդ մայրերի համար խորհրդատվության ծառայությունները պետք է դառնան պարտադիր՝ ներառելով մասնագիտական խորհրդատվության

ամբողջական փաթեթ՝ հոգեբանական, իրավական, տնտեսական, սոցիալական, բժշկական և վերականգնողական:

14. Ծնողավարման դասընթացներին մասնակցությունը ծնողների համար հղիության շրջանում և երեխայի ծննդից հետո երեխայի տարիքային ճգնաժամերով պայմանավորված տարբեր փուլերում պետք է պարբերական և պարտադիր բնույթ կրի:
15. Վերագործարկել առողջության առաջնային պահպանման կենտրոններին կից «Մայրության դպրոցները», որոնք հղի կանանց բժշկական խորհրդատվությանը զուգահեռ կտրամադրեն նաև ծնողավարման հմտությունների դասընթացներ և սոցիալական աշխատանքի ծառայություններ:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Առցանց հարթակների հասանելիություն կանանց խոցելի խմբերի համար

Աշխարհի շատ երկրների համար հանրային ծառայությունների թվայնացումն այլևս պարզապես նպատակ չէ, այն իրողություն է: Բոլոր երկրներում պետական ծառայողի հետ անձնական շփում պահանջող հանրային ծառայությունների թիվն ակտիվորեն կրճատվում է: Օրինակ, Էստոնիայում միայն ամուսնության, ամուսնալուծության և անշարժ գույքի գնումների հետ կապված ծառայություններն են դեռևս պահանջում անձնական շփում պետական ծառայողի հետ¹⁵: Այլ երկրների իշխանությունները նույնպես թվայնացնում են ծառայությունները, որոնք նույնքան գրավիչ են, որքան առաջատար համացանցային ընկերությունների արտադրանքը: Հանրային ծառայությունների թվայնացումն իրականացվում է՝ կենտրոնանալով հաճախորդների կարիքների վրա և կիրառելով «փորձարկել և սովորել» արագ զարգացող պրակտիկաները, որոնք օգտագործում են առցանց հսկաները: Բացառություն չէ նաև Հայաստանը: Վերջին տարիների ընթացքում Հայաստանում թվայնացվել են նախակրթական, կրթական, առողջապահական, սոցիալական և մի շարք այլ հանրային ծառայություններ դիմելու և օգտվելու ընթացակարգերը:

Հանրային ծառայությունների թվայնացումը մի կողմից ենթադրում է տեխնոլոգիական զարգացում, ընթացակարգերի արագացում և թափանցիկության բարձրացում, գործընթացների պարզեցում, ժամանակային, մարդկային և այլ ռեսուրսների խնայողություն, քաղաքացիների վարքագծի փոփոխություն, կոռուպցիոն ռիսկերի կրճատում, ծառայությունների անընդմեջ կատարելագործում, հաճախորդների բավարարվածության բարձրացում, իսկ մյուս կողմից որոշակի մարտահրավերներ է պարունակում, այդ թվում՝ ռեսուրսների սղություն, բյուջեի սահմանափակումներ, իրավակարգավորումների համապատասխանեցման անհրաժեշտություն, մեծ համակարգերի փոփոխման դժվարություններ, տվյալների

¹⁵ Digitizing the state: Five tasks for national governments, McKinsey and Company, November 5, 2017 (Տե՛ս <https://www.mckinsey.com/industries/public-sector/our-insights/digitizing-the-state-five-tasks-for-national-governments>):

գաղտնիության և անվտանգության ապահովումը, փոփոխություններին դիմադրություն, հմտությունների պակաս և այլն¹⁶:

Հաշվի առնելով կանանց աշխատանքային խմբի և փորձագետների կողմից հնչած կարծիքները՝ քաղաքականության տվյալ համառոտագիրը կանդրադառնա հմտությունների պակասի և փոփոխություններին դիմադրության մարտահրավերներին: Ցանկացած համակարգային փոփոխություն առաջացնում է դիմադրություն. հանրային ծառայությունների թվայնացումն առաջացնում է դիմադրություն թե՛ համակարգի ներսից, թե՛ համակարգի օգտատերերի կողմից, ինչը սերտորեն կապված է թե՛ համակարգը սպասարկող մասնագետների, թե՛ հաճախորդների հմտությունների պակասի հետ: Ցանկացած հանրային ծառայության օգտատերերի 50%, իսկ նախակրթական, կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների ոլորտում՝ ավելի մեծ տոկոսը կանայք են: Իսկ հաշվի առնելով գենդերային խնդիրների ինտերսեկցիոնալ բնույթը, տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչ կանայք ավելի խոցելի են դառնում հանրային ոլորտի փոփոխությունների համատեքստում: Կանանց և աղջիկների պարագայում թվայնացման մարտահրավերները կարող են հատկապես ուժեղ արտահայտված լինել, ի թիվս այլոց, այնպիսի գործոնների պատճառով, ինչպիսիք են տարիքը, ռասան, հաշմանդամությունը, կրթական մակարդակը, սեռական կողմնորոշումը, էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ լինելը, լեզվի չիմացությունը, քաղաքական պատկանելությունը, կրոնը, սոցիալական ծագումը, ամուսնական կարգավիճակը, միգրանտի կամ փախստականի կարգավիճակը, առողջական վիճակը¹⁷:

Կանանց աշխատանքային խմբի և փորձագետների քննարկումների ընթացքում հնչել են մի շարք կարծիքներ և օրինակներ կապված հանրային ծառայությունների

¹⁶ Digital Transformation in the Public Sector: Opportunities and Challenges, London Premier Centre, UK Training Provider, 05 August, 2023 (Տե՛ս <https://www.lpcentre.com/articles/digital-transformation-in-the-public-sector-opportunities-and-challenges>):

¹⁷ GREVIO General Recommendation No. 1 on the digital dimension of violence against women, GREVIO(2021)20, Adopted on 20 October 2021, Published on 24 November 2021, Secretariat of the monitoring mechanism of the Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence, Council of Europe – 2021, Strasbourg (Տե՛ս www.coe.int/conventionviolence):

առցանց հարթակների հասանելիության հիմնախնդրի հետ. *«Մովորաբար մի քիչ էլ կոպիտ տոնով ասում են՝ հարևան չունես, տար թող հարևանդ անի: Կամ՝ ձեր տանը երեխա չկա, ասա թող լրացնի»*:

Չնայած այն առաջընթացին, որ աշխարհը տեսել է տարիների ընթացքում հանրային ծառայությունների հասանելիության առումով, ինչպես նաև նոր հավելվածների և ավելի մատչելի հեռախոսների առկայության առումով, դեռևս առկա են մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարվեն՝ ապահովելու համար, որ կանայք հավասարապես ընդգրկվեն թվային հարթակներում: Կանանց կողմից նոր թվային տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը կնպաստի տնտեսական և սոցիալական զարգացմանը: Այնուամենայնիվ, շատ խոցելի խմբերի ներկայացուցիչներ շարունակում են հետ մնալ S2S-ները և հանրային ծառայությունների առցանց հարթակները արդյունավետորեն օգտագործելու հնարավորություններից: Քանի որ առօրյա կյանքի բազմաթիվ ոլորտներ և հիմնական ծառայություններ մատուցվում են թվային տեխնոլոգիաների միջոցով, միայն համապատասխան հմտություններ ունեցող մարդիկ կկարողանան արդյունավետ օգտվել թվայնացված տնտեսությունից, հաղորդակցվել սոցիալական ցանցերի միջոցով և օգտվել բարելավված պետական և մասնավոր ծառայություններից, ինչը ստեղծում է անհավասարության նոր հիմքեր: Բարեկեցության անջրպետը S2S հասանելիություն ունեցողների և թվայնորեն բացառվածների, մասնավորապես կանանց և տղամարդկանց միջև, կմեծանա:

2015-ի թվականի դրությամբ ըստ Equals Global Partnerships-ի, աշխարհում 200 միլիոնով ավելի քիչ կանայք ունեին բջջային հեռախոս, 250 միլիոնով ավելի քիչ կանայք, քան տղամարդիկ օգտվում էին համացանցից, և կանանց միայն 6% էին մշակում համակարգչային և բջջային հավելվածներ¹⁸: 2023 թ. GSMA Connected Women ծրագրի Mobile Gender Gap Report 2023-ի համաձայն Մեր նոր տվյալները ցույց են

¹⁸ Mariscal, Judith, Mayne, Gloria, Aneja, Urvashi and Sorgner, Alina. "Bridging the Gender Digital Gap" *Economics*, vol. 13, no. 1, 2019, pp. 20190009. <https://doi.org/10.5018/economics-ejournal.ja.2019-9>:

տալիս կանանց թվային ներառման հետագա դանդաղում կանայք 19%-ով ավելի քիչ են օգտվում բջջային ինտերնետից, քան տղամարդիկ: Սմարթֆոնների սեփականության և բջջային կապի հասանելիության գենդերային բացերը կազմում են համապատասխանաբար 7% և 17%¹⁹:

Համաձայն AfterAccess-ի հետազոտության թվային գենդերային ճեղքվածքի հիմնական պատճառը թվային սարքերի և ծառայությունների բարձր գինն է, կապի բացակայությունը, սարքերի անհասանելիությունը, գրագիտության ցածր մակարդակը և թվային հմտությունների բացակայությունը: Ոչ պակաս կարևոր են նաև սոցիալ-մշակութային խոչընդոտները²⁰:

Եթե թվային ներառման ոլորտում առկա գենդերային բացերը չլուծվեն, ամենայն հավանականությամբ դրանք կհանգեցնեն գենդերային անհավասարության սրմանը բազմաթիվ այլ ոլորտներում, ներառյալ աշխատաշուկայում անհավասարությունը և կանանց տնտեսական հնարավորությունների կրճատումը: Դրա հիմնական պատճառն այն է, որ թվային տեխնոլոգիաները ամենուր են, և թվայնացումը ազդում է մեր կյանքի բոլոր ոլորտների վրա: Հետևաբար, թվայնորեն բացառված կանայք դուրս կմնան ավելի գրավիչ և եկամտաբեր զբաղվածության ոլորտներից, որը ներկայիս թվային դարաշրջանում ամենապահանջված հմտություններից մեկն է: Թվային բացառումը հանրային ծառայություններից կարող է բերել կանանց խոցելիության խորացմանը: Իսկ կանանց թվային ներառումը զգալիորեն կբարելավի նրանց սոցիալական և տնտեսական ներգրավվածությունը: Ժամանակն այստեղ ևս մեկ վճռորոշ գործոն է, քանի որ որքան երկար ժամանակ պահանջվի գենդերային թվային բացը փակելու համար, այնքան ավելի քիչ տվյալների կապիտալ կանայք

¹⁹ The Mobile Gender Gap Report, GSMA, 2023 (Տե՛ս <https://www.gsma.com/r/gender-gap/>; https://www.gsma.com/r/wp-content/uploads/2023/07/The-Mobile-Gender-Gap-Report-2023.pdf?utm_source=website&utm_medium=download-button&utm_campaign=gender-gap-2023):

²⁰ Mariscal, Judith, Mayne, Gloria, Aneja, Urvashi and Sorgner, Alina. "Bridging the Gender Digital Gap" *Economics*, vol. 13, no. 1, 2019, pp. 20190009. <https://doi.org/10.5018/economics-ejournal.ja.2019-9>:

կկարողանան կուտակել, ինչը կարող է հանգեցնել շատ ավելի լայն գենդերային բացի²¹:

Կանանց աշխատանքային խմբի և փորձագետների հետ թվայնացված հանրային ծառայությունների հարթակների հասանելիության քննարկման ժամանակ հատկապես կարևորվել են կանանց հետևյալ խոցելի խմբերի համար դրանց հասանելիության խոչընդոտները՝

- Տարեց կանայք,
- Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ կանայք,
- Անտառաճանաչ և անգրագետ կանայք,
- Հաշմանդամություն ունեցող կանայք,
- Տեսողության խնդիրներ ունեցող կանայք,
- Մտավոր խնդիրներ ունեցող կանայք,
- Որևէ սարք և համացանցին հասանելիություն չունեցող ընտանիքների ներկայացուցիչ կանայք:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Կանանց խոցելի խմբերի համար հանրային

ծառայությունների առցանց թվային հարթակների հասանելիության բարձրացման ուղղությամբ

Վերոնշյալ մարտահրավերները հաղթահարելու համար պետական մարմինները պետք է որդեգրեն թվային փոխակերպման ռազմավարական մոտեցում, որը ներառում է հստակ նպատակներ, իրականացման ճանապարհային քարտեզ և շարունակական հաղորդակցություն աշխատակիցների, հաճախորդների և բոլոր այլ շահագրգիռ կողմերի հետ: Թվայնացման գենդերային բացերի նվազեցմանն ուղղված քաղաքականությունները կգորացնեն կանանց՝ կանխելով և նվազեցնելով գենդերային

²¹ Mariscal, Judith, Mayne, Gloria, Aneja, Urvashi and Sorgner, Alina. "Bridging the Gender Digital Gap" *Economics*, vol. 13, no. 1, 2019, pp. 20190009. <https://doi.org/10.5018/economics-ejournal.ja.2019-9>:

անհավասարությունը աշխատաշուկաներում և բարելավելով կանանց հանրային ներգրավվածությունը: Այդ նպատակին հասնելու համար առաջարկվում է՝

ԿԳՄՄՆ ուղղված առաջարկություններ

1. Մշակել կանանց և աղջիկների թվային գրագիտության բարձրացման միջոցառումներ, որոնք կներառեն կրթական, իրազեկման և կիրառական տեխնոլոգիաների վերաբերյալ պարբերաբար կանանց տարբեր խոցելի խմբերին թիրախավորող դասընթացներ: Գործընթացը կարող է համակարգել ԿԳՄՄՆ՝ պատվիրակելով դասընթացների պատրաստումն ու անցկացումը ԲՀԿ-ներին:
2. Հաշվի առնելով վերոնշյալ խոցելի խմբերի համար թվային հարթակների անհասանելիությունը՝ ժամանակավորապես նախատեսել տարբեր հանրային ծառայություններում սոցիալական օգնականի հաստիք, ով կօգնի և կսովորեցնի քաղաքացիներին օգտվել նոր հարթակներից:

Բոլոր գերատեսչություններին ուղղված առաջարկություններ

3. Ապահովել հարթակներից (պետական սոցիալական ծառայություններ, գերատեսչությունների կայքէջեր և սոցիալական ցանցեր) տարբեր լեզուներով օգտվելու հնարավորություն՝ եզդիերեն, ռուսերեն, անգլերեն:
4. Ապահովել հարթակների աուդիո ուղեցույցներ, որոնք կբարձրացնեն հարթակների հասանելիությունը թե՛ թույլ տեսողություն ունեցող քաղաքացիների համար, թե՛ ընթերցել չկարողացող այլ խմբերի համար:
5. Ապահովել հարթակները ենթագրերով, որոնք կբարձրացնեն հարթակների հասանելիությունը թույլ լսող քաղաքացիների համար:
6. Թողարկել ուղեցույցներ, տեսահոլովակներ, որոնք պարզեցված տեսանելի եղանակներով կտրամադրեն ծառայությունների վերաբերյալ և քաղաքացու քայլերի հաջորդականության վերաբերյալ տեղեկատվությունը:

7. Ապահովել հարթակները 24-ժամյա զրուցարաններով, որոնք կաջակցեն քաղաքացուն հարթակից օգտվելու և ծառայությունից օգտվելու ընթացքում:
8. Ապահովել հարթակների բողոքների ընդունման և մշակման պարզեցված համակարգով:

Այս քաղաքականության համառոտագիրը պատրաստվել է Հայաստանում վերջին տարիներին իրականացված հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա և արտացոլում է ծրագրի փորձագետների, ինչպես նաև Երևանում և ՀՀ մարզերում անցկացված երկխոսության միջոցառումների մասնակիցների տեսակետները:

«Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսԲՋԷՆ հիմնադրամի հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ:

Նյութը պատրաստվել է Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը: Նյութում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտացոլեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետները: